

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՍՈՒԿՈՒ կամ ՍՈՒԿՈՒԻՔԸ

Գերապատիւ Յուսիկ եղիսկոպոսը, «Անապատական-ներ և վանականութիւն» յօդուածի մէջ (Արարատ, Յունկ. եր. 65—68) ընդդիմախոսելով Սուկաւէտ, Զրաբաշխ և Քոսա-դազ անունների՝ Աւգերեանի, Ալիշանի և իմ տուածնոր բացատրութեանց մասին, համարում է այդ բացատրութիւնները սխալ:

Վնաս չուներ ի հարկէ եթէ իրօք սխալ լինէինք, կամ թէ առաջարկուած լինէր աւելի հաւանական բացատրութիւն: Յուսիկ որբազանը գուցէ հապճեպով է կարդացել Ալիշանի և իմ բացատրութիւնները, ապա թէ ոչ ինչպէս Քոսա-Քօչի գաղը (լեռ) կը հասկանար Քօչի լեռ, և յետոյ էլ իբր թէ Ալիշանի սխալ՝ կը հերքէր: Կամ ինչպէս կանտեսէր Զրաբաշխի և ջրառատ ջրաշատ բառերի աղերսը: Անուշագիր է եղել այն բանին՝ որ հրաբխային խանձոռ, լերկ, խիճ ու առազուտ լեռները, ինչպէս Քօչի լեռը, ամբողջովին ծծելով անձրեի և ձիւնի ջրերը՝ արտահոսում են առատաջուր աղբիւրներ, մինչ բռւսաւէտ լեռները՝ անձրեաջրերը վազեցնելով վերայից կամ բռւծանելով բոյսերը՝ պակաս ընդունակ են մեծամեծ աղբիւրներ արտադրելու: Խանձոռ, լերկ Քօչի գաղը՝ գետակներ է հոսեցնում աջ ու ձախ, որպիսի պատճառաւ էլ Սուկաւէտ կամ Զրաբաշխ է կոչուել, իսկ Սրբազանը ասում է թէ՝ «Զրաբաշխը ոչ մի առնչութիւն չունի ջրառատ-ջրաշատի (=Սուկաւէտի) հետ», այլ թէ՝ «Սուկաւը . . . հաւանօրէն նշանակում է անջրդի, առապար»: և այդ նորա համար՝ որ Սուկաւէտի արտաքինը այդպէս չոր ու ցամաք է . . .

Սուկաւէտ անունի բացատրութեան դէմ Յուսիկ սրբազանի միւս առարկութիւնը, —թէ՝ Արարները է. դա-

բում են արշաւել Հայաստան, իսկ Սուքիասեանց վկայաբանութիւնը արդէն կազմուած էր է. դարում. «ուրեմն է. դարից առաջ Սուքիասեանց վկայաբանութիւնը կրում էր «Նահատակութիւն ճգնաւորացն Սուկաւէտայ», —միանագամայն թոյլ է։ Սուկաւէտայ բառը կարող էր մտնել Զեռագրերի մէջ և փոխանակել Սուքիասեանց բառին՝ թէ շատ վաղ և՝ թէ հէնց վերջին արտագրութեանց ժամանակ. բաւական էր որ մի օր Սուկաւէտ անունը—իբրև նոյնանիշ Ջրաբաշխի — կապուած լինէր Սուքիասեանց ների հետ։ Բացի այս, Արաբների արշաւանքներից առաջ էլ հնարաւոր էր այդպիսի օտար անունների հանդիպել մեր երկրում, օրին, կոտայք, Բարկլիշատ, Եաշտիշատ, Շահապիվան, ևն Եաշտիշատ և Շահապիվանը ևս նոյն կերպով եմ բացատրել, միայն իմ բացատրութեամբ հասկանալի է դառնում «Շահապին Շահապիվանի»։ իսկ Եաշտիշատը և Շահապիվանը՝ յիշում են մեր Դ. և Ե. դարերի հեղինակները—Ագաթանգեղոս, Բիւզանդ, Խորենացի, այն ժամանակ՝ երբ Արաբները չէին արշաւել մեր երկիրը . . .

Սուկաւէտը՝ Ջրաբաշխի թարգմանութիւնն է, կամ ընդհակառակն. տես իմ բացատրութիւնը (Խորենացուն Խորենացով պէտք է հասկանալ, Բ. հատ. եր. 86—89)։ Այլ բան է՝ եթէ ուրիշ աւելի յաջող բացատրութիւն լոյս տեսնէր մի օր։

Թարդ. Խաղ. Գեղարգեան.

6 փետրվարի 1906 թ.

ի Ա. Եջմիածին։



Պիտի Կեր մասնիւուրացանց վեհան ովասիւնիւնը ու պահանջանակը ՄԱ—ովակի ովասուառ ու այլ վեհանակը